ՕԾՎԵՑ
ՍՊԻՏԱԿԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ.
«ԱՂՈԹՔՈՎ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ»

Դեկտեմբերի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծումը: Օծման արարողությանը ներկա գտնվելու նպատակով Սպիտակ էր ժամանել նաև Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Եկեղեցու մոտ Վեհափառ Հայրապետին ու հանրապետության նախագահին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Նորակառույց եկեղեցու զանգերի դողանջի ներքո, «Հրաշափառի» երգեցողությամբ ու հոգևոր հայրերի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Ս. Սեղանը: Ապա, չեռամբ Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանի, Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, օծվեցին Ս. Հարություն եկեղեցու բոլոր այուները, մկրտության ավազանը:

«Ս. Հարությունը կառուցվեց որպես վկայություն ապրելու և հարատևելու մեր կամքի, որպես վկայություն արարող մեր ոգու, ստեղծագործ և շինարար մեր բազկի: Այս եկեղեցին միաժամանակ գեղեցկագույն հուշարձանն է բոլոր մեր բազկի: Այս եկեղեցին միաժամանակ գեղեցկագույն հուշարձանն է բոլոր այն ապիտակցիների, որ դարձան զոհը ահավոր երկրաշարժի»,- շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով, ասաց Վեհափառ Հայրապետը, պատգամելով նրանց ականջալուր լինել հոգու ձայնին և մշտական աղոթքներով կենդանի պահել սբ. եկեղեցին: Նորակառույց եկեղեցուն Վեհափառ Հայրապետը հանձնեց նաև իր նվերը՝ սկիհ, որտեղից կբաշխվի Քրիստոսի կենարար մարմինն ու արյունը և որով հավատավոր ժողովուրդը կհաղորդակցվի երկնային Տիրոջ հետ:

«Աստծո օրհնությունը սրբալույս մյուռոնով իջավ ապիտակցիների վրա», խոսքերով հավատավոր ապիտակցիներին շնորհավորեց նաև Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

Երկրաշարժից հետո վեր հառնած Ս. Հարությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նվերն է աղետյալ սպիտակցիներին, որի կառուցումը սկսվեց երկու տարի առաջ՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ:

Օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ երջանկահիշատակ Գարեգին Ա Վեհափառի, Սպիտակի նախկին քաղաքապետ նորոգ հանգուցյալ Սուրեն Ավետիսյանի և Սպիտակի երկրաշարժի բոլոր զոհերի, կատարեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն:

Ապա Ս. Հարություն եկեղեցում մատուցվեց առաջին Ս. Պատարագը: Պատարագիչն էր Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

Սպիտակից Վեհափառ Հայրապետը մեկնեց Երևան, ուր կառուցվում են հավատքի նոր տաճարներ: Նորին Սրբությունն այցելեց նախ Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի և ապա՝ Ս. Սարգիս եկեղեցու շինհրապարակներ, հերթական անգամ ծանոթանալու շինարարական աշխատանքների ընթացքին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

«ԱՌԱՔԵԼՈՅ ԱՂԱՒՆՈՅ».
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՊԻՏԱԿԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆԸ